Զ. Մոկաց տէր,
Է. Ռշտունեաց տէր,
Ը. Վահունեաց տէր,
Թ. Կաղմէիցˀ տէր,
Ժ. Անձաւացեաց տէր,
ԺԱ. Ապահունեաց տէր,
ԺԲ. Կամսարականն,
ԺԳ. Այղ Ապահունի,
ԺԴ. Վանանդացին,
ԺԵ. Ամատունի տէր[10],
ԺԶ. Գողթան տէր,
ԺԷ. Գնունեաց տէր,
ԺԸ. Այղ Անձաւացի,
ԺԹ. Տայոց,
Ի. Բասենոյ դատաւորն[11],
ԻԱ. Գնթունեայ տէր,
ԻԲ. Վարձաւունին,
ԻԳ. Գարդմանայ տէր,
ԻԵ.[12] Սահառունին,
ԻԶ. Գաբեղէնից տէր,
ԻԷ. Աբեղէնից տէր,
ԻԸ. Սիւնեաց երկրորդն,
ԻԹ. Արծրունեաց երկրորդն,
Լ. Արծրունեաց երրորդն,
ԼԱ. Մամիկոնէից երկրորդն,

---

[8] *Գուցէ, կարելի է վերականգնելի համարել՝* Ե. Շահապն, [Զ.] Ծոփաց տէր *փխ* Ե. Շահապն Ծոփաց տէր *(տե՛ս Ագաթանգեղոսի մօտ՝* եաւթերորդ՝ իշխանն Ծոփաց աշխարին... չորեքտասաներորդ՝ իշխանն շահապ *[ձձ.* շահապն*]* Զարաւանդ եւ Հեր գաւառի. *բոլոր դէպքերում, հակառակ Բ. Յարութիւնեանի դրոյթի, «Գահնամակ»-ի* Ծոփաց = [Մեծն] Ծոփաց, *ինչպէս որ եղել է յունարէն թարգմանութեամբ պահպանուած «Գրիգորի վարքում»՝* եօթերորդ՝ իշխանը Մեծ Ծոփքի, որը Միջագետքի մօտ է գտնւում, *տե՛ս G. Garitte, 1946, էջ 73; Ագաթանգեղոս, 1977, էջ 178)*

[9] *Ա* Կասպէից *փխ* Կաղմէից *(վերականգնում. տե՛ս Ա. Յակոբեան, 2009, էջ 336)*

[10] *«Զօրանամակ»-ում, թերեւս, գրչական վրիպակով՝ Արեւելեան դռան երկրորդ տողում՝* Բ. Ամասկոնի. *նրա զօրաքանակի թուանշանը եւս, գուցէ, կարելի է համարել երկաթագիր տառերի շփոթի արդիւնք եւ վերականգնել՝* Տ (4000) *փխ* Մ (200). *յիշենք, որ 450-451-ին Վահան Ամատունին Հայոց առաջին պաշտօնեան էր՝ հազարապետը*

[11] *Գուցէ, կարելի է վերականգնելի համարել՝* Ի. Բասենոյ, [ԻԱ.] Դատաւորն *փխ* Ի. Բասենոյ դատաւորն

[12] *Գուցէ, կարելի է վերականգնելի համարել՝* ԻԳ. Գարդմանայ տէր, [ԻԴ. Ծաւդէից *(կամ՝* Ուտէացի*)* տէր,] ԻԵ. *փխ* ԻԳ. Գարդմանայ տէր, ԻԵ. *(ըստ «Զօրանամակ»-ի եւ Խորենացու, որոնք Գարդմանի, Ծաւդէից եւ Ուտէացի իշխաններին յիշում են իրար կողքի. հմմտ.* **տէր**... **տէր**. *ըստ Բ. Յարութիւնեանի՝ «Գահնամակ»-ի մեզ հասած բնագրում Ծաւդէից իշխանութեան բացակայութիւնը բաւարար է՝ մտածելու, թէ այն վերացուել էր մինչեւ Դ դ. կէսերը, որից յետոյ Փաւստոսը նշում է Մուշէղ Մամիկոնեանի կողմից՝ արդէն* Արձախ *կոչուած ապստամբած մարզի հպատակեցումը)*